Այսպէս թէ այնպէս, հայ-վրացական պատերազմը վերջացաւ։ Բանակները կատարեցին իրենց պարտականութիւնը։ Խօսքը անցնում էր քաղաքագէտներին։

*

Քաղաքագէտների գործը, սակայն, հեշտ չէր լինելու. պատերազմն ու յարակից դէպքերը չափազանց շատ էին լարել կրքերն ու խառնափնթորել կացութիւնը։ Մանաւանդ, վրաց կառավարութիւնը եռանդ չէր խնայել այդ ուղղութեամբ. պատերազմի ընթացքում հայերի վիճակը Վրաստանում ոչնչով չէր տարբերւում այն վիճակից, որ ստեղծուել էր Թիւրքիայում, պատերազմի օրերին։ Հայաստանի դրամները բանկերից և հայկական պետական գոյքերը գրաւեցին։

Հայաստանի ներկայացուցչութիւնը փակուեց։ Վրահայոց Ազգ. Խորհուրդը փակուեց։ Գաղթականական ու որբախնամ մարմինները փակուեցին։ «Աշխատաւոր», «Նոր-Հորիզոն», «Կաւկ. Սլովօ» և մի շարք ուրիշ թերթեր փակուեցին։ Բազմաթիւ հայ գործիչներ, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դաշնակցական անդամները ձերբակալուեցին։ Հայ միլիցիոներները արձակուեցին պաշտօնից։ Սկսուեց մի այլանդակ հալածանք բոլոր հայերի դէմ անխտիր, զգուելի հայրասութիւն Թիֆլիսի փողոցներում։ 1918թ. յունս. 8-ին, Վրահայոց Ազգ. Խորհուրդը Վրաստանի կառավարութեան ներկայացրեց մի յուշագիր, որ ահռելի մանրամասնութիւններ էր տալիս հայերի նկատմամբ գործադրուող կամայականութիւնների և բռնութիւնների։

«Պատերազմական գործողութիւնների սկսելով, ասում էր այդ յուշագիրը, հանրապետութեան կառավարութիւնը Վրաստանի հողի վրա ապրող բոլոր հայերին յայտարարեց ռազմագերի՝ կիրառելով նրանց վերաբերմամբ ճնշումներ՝ բանտարկութիւնների, Քութայիսի նահանգն աքսորելու և այլ ձևերով... Հպատակութեան Օրէնքի թերութիւնների պատճառով, պատերազմի հէնց առաջին օրից ստեղծուած թշնամական մթնոլորտը խուզարկութիւններ, ձերբակալութիւններ և աքսորումներ կատարող միլիցիայի և յատուկ զօրամասի պաշտօնեաների առջև, բաց արաւ լայն հեռանկարներ ամէն կարգի ապօրինութիւնների հայերի նկատմամբ՝ ակներև կերպով չձերբակալելիք անձերի ձերբակալութիւնից սկսած մինչև բաց ու անպատիժ դրամաշորթութիւն։ Հայերի վիճակը է՛լ աւելի վատացաւ, երբ հրապարակուեցին ընդհանուր-նահանգապետի պարտադիր որոշումները, որոնք, վարչական օրէնսդրութեան կարգով, ընդարձակում էին ռազմագերիների տեսակները՝ մտցնելով նրանց մէջ Հայաստանի Հանրապետութեան զօրքերով գրաւուած Բորչալուի շրջանն էլ»։

զինուոր, անհետ կորել 62 և վիրաւորուել 60, 5րդ գնդից՝ սպանուել էր 19 զինուոր, անհետ կորել 44 և վիրաւորուել 14, 6րդ գնդից սպանուել էր 8, անհետ կորել 11 և վիրաւորուել 18։ Կռիւներում սպանուեցին հետևեալ սպաները՝ Վահան Դանիէլեան, Լևոն Գաբրիէլեան, Յովսէփ Գրիգորեան, Աբշակ Մելիք-Շահնազարեան, Մարտիրոս Խոջայեան, Թէոդոր Թան, Կոլոմէյչիկ, Գրիգոր Սաֆարեան, Մկրտիչ Տէր-Յովհաննիսեան, Մատթէոս Տէր-Մատթէոսեան, Մկրտիչ Տէր-Պօղոսեան։ Վէրքերից մեռան սպաներ Սուրէն Տէր-Ղուկասեանը, Գէորգ Սուլթան Շահը, Թիլիչէյևը, Տէր-Գրիգորեանը։ Վիրաւորուեցին սպաներ Ալեքսանդր Մամեանցը, Սմբատ Զէրիգեանը, Ալեքսանդր Անդրաստովը, Արամայիս Բաբլաշեան-Բաբլումեանը, Տիգրան Ազիզեանը, Լևոն Վերմիշեանը, Նիկ. Թարխանեանը (*Կուռо*), Դարբինեանը և զին. պաշտօնեայ Վախտանգ Դաւթեանը։